

8715



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«08» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 154 - 24

Նախաձեռնող՝

«ՄԵԳԱՍԹՈՆ» ՍՊԸ

ք. Երևան, Աջափնյակ, Ա. Վշտունի 3 նրբ., տ. 3 Ա

Գործունեությունը՝

Արաքսի ավազի հանքավայրի 1-ին փեղամասում
կատարվելիք երկրաբանական ուսումնասիրություն
Արմավիրի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 154 - 24

« 08 » օգոստոսի 2024թ.

**Արմավիրի մարզի Արաքսի ավազի հանքավայրի 1-ին տեղամասում
կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«ՄԵԳԱՍԹՈՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, ծրագիր /գ կատեգորիա/
Գործունեության տեսակը՝	
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Արաքս համայնք Արաքս բնակավայր

Ներածական մաս Արաքսի ավազի հանքավայրը գտնվում է Արմավիրի մարզում, տեղակայված է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հարևանությամբ, Արաքս գետի ձախ ափին: Հանքավայրի հետախուզվող 1-ին տեղամասը գտնվում է Մարգարա գյուղից 7.5 կմ, Երասխաուն գյուղից 5.0 կմ, Ջրառատ գյուղից 2.5-3.0 կմ, Արաքս գյուղից 3.5 կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքը գտնվում է Արաքս համայնքի Արաքս բնակավայրում:

Երկրաբանական ուսումնասիրության տարածքի մակերեսը կազմում է 11.50918 հեկտար, և այն ներկայացված կոորդինատներով կադաստրային քարտեզում տեղադրելիս համադրվում է Արմավիրի մարզի Արաքս (Էջմիածնի տարածաշրջան) համայնքի՝ պետական սեփականություն հանդիսացող, հատուկ նշանակության 04-017-3001-0011 ու 04-017-3001-0012 կադաստրային ծածկագրերով հողամասերի, ինչպես նաև 04-017-1036-0001 կադաստրային ծածկագրով գետի հետ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է Արաքս բնակավայրի վարչական սահմանում և բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ըստ Arm WGS համակարգի).



1. X=8436773.00	Y=4435163.46
2. X=8436773.00	Y=4435224.53
3. X=8437243.68	Y=4435227.01
4. X=8437314.18	Y=4435236.89
5. X=8437613.48	Y=4435351.05
6. X=8437776.64	Y=4435367.60
7. X=8437781.16	Y=4435338.08
8. X=8437692.89	Y=4435302.31
9. X=8437542.22	Y=4435229.89
10. X=8437505.16	Y=4435186.66
11. X=8437391.77	Y=4435130.99
12. X=8437356.17	Y=4435131.51
13. X=8437229.41	Y=4435096.41
14. X=8437189.28	Y=4435096.41
15. X=8437132.31	Y=4435091.70
16. X=8437072.03	Y=4435074.92
17. X=8437022.56	Y=4435054.25
18. X=8437010.16	Y=4435051.65
19. X=8436976.82	Y=4435054.00
20. X=8436911.84	Y=4435103.10
21. X=8436853.99	Y=4435114.71

Երկրաբանական հետախուզումը նախատեսվում է իրականացնել մինչև 16 հետախուզահորով 3.6-4.0 մ խորությամբ, ընդհանուրը 61.6 մ կամ 147.84 մ³ ծավալով, այդ թվում՝ 1.54 մ³ հողաբուսական շերտ:

Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 38.4 մ²:

Ավազի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հետախուզահորերից վերցնել 1-ական նմուշ, ընդամենը 16 նմուշ: 9 նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյի ուղղահայաց և ամբողջ հզորությամբ:

Քիմիական և միներալոգիապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է համապատասխանաբար վերցնել 3-ական նմուշներ:

Ծրագրով նախատեսվում է կատարել ֆիզիկամեխանիկական փորձարկումներ, քիմիական և միներալապետրոգրաֆիական ուսումնասիրություններ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների:

Հետախուզվող երևակման տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, դրանք ուսումնասիրել և նկարագրել, կատարել



ռեժիմային դիտարկումներ և ուսումնասիրել ջրի որակը: Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Աշխատանքները կկատարվեն ձեռքով:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 38.4 մ²: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 76800 ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- վառելիքի հիմնական լիցքավորումը կկատարվի հարակից Արաքս բնակավայրում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով մոտեցնող ճանապարհների ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու են հատուկ ծառայության ուժերով: Դատարկված փոսը լցվելու է քարերով,
- Արաքս գետի ջրերի աղտոտման բացառում, ինչի նպատակով հայցվող տարածքի հարավայրի եզրով թողնվելու է 20 մ լայնությամբ բնամաս,
- ընդերքօգտագործման թափոնների կառավարում,
- կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ, ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխում մոտակա աղբավայրը:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Փորձաքննական գործընթացում պարզվել է, որ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է անմիջապես Հայաստանի Հանրապետության պետական սահմանի և ջրային պատենշի /արգելաթմբերի/ մոտ հատվածում և ընկերության կողմից համապատասխան աշխատանքների իրականացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանման համար:

2. Իրականացվող աշխատանքների արդյունքում իջնում է գետի ափի մակարդակը ու գետը հորդարատ անձրևներից և ձնհալքներից հետո դուրս է գալիս հունից ու փոխելով հունը տեղափոխվում է դեպի Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը: Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև պետական սահմանը որոշվում է Արաքս գետի հունով, հետևաբար Արաքս գետի հունի փոփոխությունը բերում է Հայաստանի Հանրապետության տարածքի որոշակի հատվածների անցում Թուրքիայի Հանրապետությանը:

3. Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսվող տարածքում և նրան հարակից տարածքներում հանդիպում են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված Տափաստանային ծիծառակտցար, Թշան կարապ, Սովարական ֆլամինգո, Փոքր Ձկնկույլ և Բզակտուց կենդանիների առանձնյակները:



Հետևաբար երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսվող տարածքում նպատակահարմար չէ նախատեսվող գործունեության իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, պաշտպանության, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արմավիրի մարզպետարանը, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՄԵԳԱՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արաքսի ավազի հանքավայրի 1-ին տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Ի. Մեջ, Հովիկ Մեսրոպյան